# ԱՎԻԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# N ԱՈՒԿ[redacted]ՄԱ-ԱՊՁԲ-19/1

ք. Երևան « 18 » փետրվարի 2019թ.

<<Ավիաուսումնական կենտրոն>> ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Լ. Գաբրիելյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Նարեկ Բերբերյանը, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 644115 (Վեց հարյուր քառասունչորս հազար հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ<br>ք. Երևան, «Զվարթնոց» օ/կ<br>«Արդշինբանկ» ՓԲԸ<br>Զվարթնոց մ/ճ<br>Հ/Հ՝ 2470642071180000<br>ՀՎՀՀ՝ 01204026<br>Տնօրենի ժ/պ՝ Լ.Գաբրիելյան<br>----------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «ՆԱՐԵԿ ԲԵՐԲԵՐՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ<br>Երևան, Նոր Արեշ 12 փ., 99/1, 37<br>ՀՎՀՀ՝ 23231079<br>«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 11816007213800<br>Ա/Ձ Ն. Բերբերյան<br>----------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*«  » փետրվարի 2019թ. կնքված*
*ԱՈՒԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը*** |
| 1 | Տետրեր | 96 թերթանի, վանդակավոր ,ընդհանուր | հատ | 480 | 960 | 2 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 2 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 2 | Սոսինձ, էմուլսիա | Սոսինձ պոլիվինիլացետայի ն ( էմուլսիա), 90 գր | հատ | 1000 | 2000 | 2 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 2 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 3 | Հաշվասարք, գրասենյակային | 12 նիշանի սեղանի 18x13,5 սմ չապերով,գործողու թյունների ցուցադրումով վահանակի վրա, ինքնալիցքավորվող | հատ | 3800 | 15200 | 4 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 4 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 4 | Ռետին հասարակ | Ռետին հասարակ.նախատ եսված մատիտով աշղատանքը մաքրելու համար | հատ | 78 | 1950 | 25 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 25 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 5 | Գրիչ գնդիկավոր | Գրիչ գնդիկավոր, տարբեր տեսակի կառուցվածքով, 90 հատ կապույտ, 15 հատ կարմիր, 5 հատ սև: | հատ | 140 | 15400 | 110 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 110 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 6 | Մարկերներ | Տարբեր գույների՝ նախատեսված ընդգծումներ,նշում ներ անելու համար,ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութերից տափակ ծայրով | Հատ | 380 | 7600 | 20 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 20 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Սրիչներ | Սրիչ նախատեսված գրաֆիտե մատիտ սրելու համար | հատ | 175 | 2625 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 8 | Մատիտներ | Հասարակ սև գրաֆիտե մատիտ | հատ | 125 | 3750 | 30 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 30 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 9 | Շտրիխներ | Սպիտակ գույնի գրենական նյութ, ուղղումներ կատարելու համար, գրիչի կառուցվածքով: | հատ | 240 | 7200 | 30 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 30 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 10 | Սոսնձամատիտ, գրասենյակային | Չոր սոսինձ՝ գրասենյակային,սոսնձամատիտ՝թուղթ սոսնձելու համար 35 գր: | հատ | 345 | 6900 | 20 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 20 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 11 | Դակիչ | Նախատեսված 16 էջի համար, երկու անցքով | հատ | 1850 | 7400 | 4 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 4 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 12 | Թղթադարակ, հարկերով | Գրասենյակային թղթադարակ պլաստմասե, հորիզոնական երեք հարկանի | հատ | 3000 | 15000 | 5 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 13 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10մմ/6մմ | տուփ | 145 | 1450 | 10 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 10 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 14 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | Գրասենյակային կարիչների մետաղալարե, 24/6 | տուփ | 190 | 2850 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 15 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակալներին ամրացնելու հնարավորությամբ | տուփ | 1450 | 21750 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 16 | Թղթապանակ, արագակար, թղթյա | Արագակար կավճած | հատ | 100 | 2000 | 20 | ք.Երևան, | 20 | Պայմանագիրը ուժի |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ստվարաթղթից,մե տաղական ամրակով,՝ A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար | | | | | <<Զվարթնոց>> օ/կ | | մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 17 | Թղթապանակ, թելով, թղթյա | Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, թելակապով | հատ | 100 | 6000 | 60 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 60 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 18 | Թղթապանակ, կոշտ կազմով | Թղթապանակ, կոշտ ստվարաթղթե կազմով,համապատասխան չապի կոնակով(ծավալով) մետաղյա ամրացման հարմարանքով,A4 ձևաչապի(210x 297) մմ ձևաչապի թղթերի համար | հատ | 995 | 49750 | 50 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 19 | Թղթապանակ՝ ամրակով | Թղթապանակ՝ ամրակով A4 31x23սմ ձևաչափի, տարբեր գույների | հատ | 980 | 14700 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 20 | Կարիչ, 20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ, 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար | հատ | 1500 | 7500 | 5 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 21 | Թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/ | A4 ,չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար,թելիկներ չպարունակող,մեխանիկական եղանակով ստացված,80գ/մ2, (210x297 )մմ | կգ | 895 | 246125 | 275 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 275 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 22 | Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար | Ծրար ՝ A4 (210x297)մմ ձևաչափի.90% | հատ | 90 | 27000 | 300 | ք.Երևան, <<Զվարթնոց>> | 300 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սպիտակության,1 մ2 մակերեսը՝100գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող: | | | | | օ/կ | | հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 23 | Նամակի ծրար, A5 ձևաչափի, ուղիղ կափույրով | Ծրարներ չթափանցող,եռանկյունաչափ փակվող,ղիտ թղթից՝ նախատեսված գաղտնիության պարունակող նամակների համար, սահմանված չափի և ձևով: | հատ | 65 | 3250 | 50 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 50 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 24 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | Թղթեր նշումների համար կպչուն, 76x127մմ | տուփ | 290 | 4350 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 25 | Թուղթ նշումների, տրցակներով | Թղթեր նշումների համար 76x127մմ | տուփ | 295 | 4425 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 26 | Գրատախտակ մարկերով գրելու համար,կախովի | Գրատախտակ ֆլիպչարտ 60x90 սմ, ալյումինե շրջանակով,մագնիսային, մառկերով | հատ | 30000 | 90000 | 3 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 3 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 27 | Կավիճ | 2 աշխատանքային մակերեսներ,պատրաստված 0,3մմ պողպատից պոլիմերային ծածկույթով | տուփ | 2000 | 20000 | 10 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 10 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 28 | Գրասենյակային գիրք | Մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով | հատ | 1190 | 11900 | 10 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 10 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 29 | Ամրակ միջին | Միջին | տուփ | 550 | 5500 | 10 | ք.Երևան, | 10 | Պայմանագիրը |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ամրակներ՝մետաղական պատվածքով, 33-43մմ երկարությամբ | | | | | <<Զվարթնոց>> օ/կ | | ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 30 | Ամրակ, մետաղյա, փոքր | Փոքր գրասենյակային ամրակներ,մետաղական,25-33մմ չափիթղթի տրցակները ամրացնելու համար | տուփ | 150 | 4500 | 30 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 30 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 31 | Ամրակ, մետաղյա, մեծ | Գրասենյակային ամրակներ,մետաղական,50մմ չափիթղթի տրցակները ամրացնելու համար | տուփ | 200 | 400 | 2 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 2 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 32 | Սեղմակ, միջին | Գրասենյակային ամրակներ,մետաղական, 30թերթ չափիթղթի տրցակները ամրացնելու համար | հատ | 75 | 750 | 10 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 10 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 33 | Սեղմակ, մեծ | Գրասենյակային ամրակներ,մետաղական,50 թերթ չափիթղթի տրցակները ամրացնելու համար | հատ | 95 | 950 | 10 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 10 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 34 | Քանոն՝ մետաղյա | Ուղիղ քանոն՝ գծաքաժանումներով,առավելագույն երկարությունը 30սմ, մետաղյա | հատ | 350 | 1750 | 5 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 5 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 35 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն | Գլանափաթեթված ժապավեն 48մմ՝ լայնությամբ, ժապավենի երկարությունը՝100 մ | հատ | 245 | 980 | 4 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 4 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| 36 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն | Գլանափաթեթված ժապավեն 19մմ՝ լայնությամբ, | հատ | 50 | 1000 | 20 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 20 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ժապավենի երկարությունը՝36մ | | | | | | | աշխատանքային օրվա ընթացքում |
| 37 | Շնորհավորական բացիկներ | Ստվարաթղթե, գունավոր տպագրությամբ, ներդիրով, ոչ անվանական | հատ | 1950 | 29250 | 15 | ք.Երևան, <<Զվարթնոց>> օ/կ | 15 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| Ընդամենը | | | | | 644115 | | | | |

**ԳՆՈՐԴ**

«Ավիառումնական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, «Զվարթնոց» օ/կ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Զվարթնոց մ/6
Հ/Հ՝ 2470642071180000
ՀՎՀՀ՝ 01204026
Տնօրենի ժ/պ՝ Լ.Գաբրիելյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆԱՐԵԿ ԲԵՐԲԵՐՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ
Երևան, Նոր Արեշ 12 փ., 99/1, 37
ՀՎՀՀ՝ 23231079
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11816007213800
Ա/Ձ Ն. Բերբերյան

---
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 18 » փետրվարի 2019թ. կնքված*
*ԱՈՒԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Տետրեր | | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 | 960 |
| 2 | Սոսինձ, էմուլսիա | | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 | 2000 |
| 3 | Հաշվասարք, գրասենյակային | | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 | 15200 |
| 4 | Ռետին հասարակ | | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 | 1950 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 5 | Գրիչ գնիկավոր | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| 6 | Մարկերներ | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| 7 | Սրիչներ | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| 8 | Մատիտներ | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| 9 | Հարիներ | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| 10 | Սրանձամատիտ, գրաֆիտյաղամիջին | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |
| | | | 6900 | 7200 | 3750 | 2625 | 7600 | 15400 |

| | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | թղթապանակներ, իսկզբի, լիցքավորված | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |
| 18 | թղթապանակներ, լիցքավորված սղշ2ոտ | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |
| 19 | թղթապանակներ, լիցքավորված | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |
| 20 | Կարիչ, 20-50 թերթի համար | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |
| 21 | Թուղթ, A4 ֆորմատի 1 /21x29.7/ | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |
| 22 | Ծրար, սեռ, A4 ձևաչափի համար | | 6000 | 49750 | 6000 | 14700 | 6000 | 49750 | 6000 | 7500 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 | 246125 | 27000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 23 | Նամակի ծրար, A5 ձևաչափի, ուղիղ կափույրով | | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 | 3250 |
| 24 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 | 4350 |
| 25 | Թուղթ նշումների, տրցակներով | | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 | 4425 |
| 26 | Գրատախտակ մարկերով գրելու համար,կախովի | | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 | 90000 |
| 27 | Կավիճ | | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 | 20000 |
| 28 | Գրասենյակային զիրք, մատյան, 70-200էջ, տողանի, սպիտակ էջերով | | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 | 11900 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29 | Ամրակ միջին | | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 | 5500 |
| 30 | Ամրակ, մետաղյա, փոքր | | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 | 4500 |
| 31 | Ամրակ, մետաղյա, մեծ | | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 | 400 |
| 32 | Սեղմակ, միջին | | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 |
| 33 | Սեղմակ, մեծ | | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 | 950 |
| 34 | Քանոն՝ մետաղյա (100) | | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 | 1750 |
| 35 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ | | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 | 980 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 36 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 | 1000 |
| 37 | Շնորհավորական բացիկներ | | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 | 29250 |
| **Ընդամենը** | | | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | 644115 | **644115** |

**ԳՆՈՐԴ**

«Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, «Զվարթնոց» օ/կ
«Արդշինբանկ» ՓԲԸ
Զվարթնոց մ/ճ
Հ/Հ՝ 2470642071180000
ՀՎՀՀ՝ 01204026
Տնօրենի ժ/պ՝ Լ.Գաբրիելյան

---
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՆԱՐԵԿ ԲԵՐԲԵՐՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ
Երևան, Նոր Արեշ 12 փ., 99/1, 37
ՀՎՀՀ՝ 23231079
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 11816007213800
Ա/Ձ Ն. Բերբերյան

---
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 3*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«  »  20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը  Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն